



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

02 օգոստոսի 2012 թվականի N 111-Ա

ք. Հրազդան

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի նիստի N 19 արձանագրային որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 22-րդ կետը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2012 թվականի հունիսի 18-ի N78-Ա և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի N51-Ա/1 համատեղ հրամանի հավելված 1-ին և 2-րդ կետերը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանում ստեղծել գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) *Արզյուշ Պեպրոսյան* - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ,

2) *Անահիտ Գաբրիելյան* - հանձնաժողովի քարտուղար, Հրազդանի քաղաքապետի օգնական /համաձայնությամբ/,

3) *Զուլեյխա Բուրուշյան* - անդամ, մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության պետ,

4) *Վաչագան Թովմասյան* - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության, տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ,

5) *Մինաս Պեպրոսյան* - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ /անդամ/,

6) *Կարինե Հարությունյան* - անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության, սոցիալական ապահովության բաժնի առաջին կարգի մասնագետ,

7) *Ասահիք Մելքոնյան* – անդամ, <<Հայ օգնության միություն>> հասարակական կազմակերպության անդամ /համաձայնությամբ /,

8) *Նինա Հակոբյան* - անդամ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիայի Հրազդանի մասնաճյուղի նախագահ /համաձայնությամբ /,

9) *Ասահիք Աղոյան* – անդամ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցացիայի քաղաքացիական նախաձեռնությունների Կոտայքի մարզային կենտրոնի ղեկավար /համաձայնությամբ /,

10) *Ջեննա Ոսկանյան* – անդամ, կանանց հանրապետական խորհրդի Հրազդանի մասնաճյուղի նախագահ /համաձայնությամբ/,

11) *Քարիկ Բաղդասարյան* – անդամ, Հայաստանի Հանրապետական կուսակցության Արուսիյի շրջանային կազմակերպության կանանց խորհրդի նախագահ /համաձայնությամբ/:

2. Հանձնաժողովին՝ աշխատանքները իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի նիստի N 19 արձանագրային որոշմամբ հաստատված N 2 հավելվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետի 2012 թվականի հունիսի 18-ի N78-Ա և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հունիսի 12-ի N51-Ա/1 համատեղ հրամանի պահանջներով:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի հուլիսի 29-ի <<Գենդերային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 94-Ա կարգադրությունը ուժը ճանաչել կորցրած:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ